պատառք են, փոքունքն հրակատարք. այսպիսի է և մերձաւորն Արայի լեառն հերձեալ հրաբուխ. և վիճակն Սհամթլու որ է սահման Արմաւրայ՝ ծածկեալ է հոսանօք լաւայի: Այլ յոլովագոյն և հզօրագոյն ևս հրաբուխք են 'ի Դ լեռնակոյտն զեղերքք ծովուն Սեւանայ՝ որ և ահեղ բաժակ մի Թուի նոցին, յորոց և գետոյն որ մասամբ 'ի ծովէն ելանէ՝ առեալ Թուի զանունն Հրազդան կամ Հուրաստան. գլխաւորք հրաբխիցն են Ահմանկան Գանը-Գեօլ ըճակաւն, Աքատաղ, Պոլտաղ, Նալ-Թէփէ՝ յորոյ խանձաքարանց յատակեալ է մեծ մզկիթն Երևանայ. Շամիրամայ լեառնն, և համօրէն պասալտեան լեռնահովտն Գառնոյ. 'ի հարաւակողմն՝ բաժակաձիրն Աբդըլայ-Սար, Գարանլըգ, Ալակեօլ, Դաշ կամ Տիք-Փիլաքան, Տէվեկէօղ, Գըզըլ-Թէփէ, յորում և ջերմուկք են եռացեալք 120° ֆար. (1). Գըզըլպօղազ. Գիլնսէլի, Տէլիք-Թէփէ, և Քիւքիւրալիւ (ծծմբաւոր) յարևելակողմն, և այլք: Ի կողմանս Արցախայ ևս Թուին լինել հրաբուխք չև ևս քննեալք, քանզի Կայծոյ-ծառ լերինն անուն և Գանձակայ մեծ սասանումն և կործանումն յամին 1140, յորում և Ալհարակ լերին փլանել և լիճ կազմել՝ զոյն հաւաստեն. ընդ հրաբուխս Ճանաչի և Եըլանտաղը 'ի Գողթն: Ի բնիկ Հայկական պատրուն նշանաւոր քան զամենեսին են կրկին Մասիք, երկոքին ևս կողապատառք, երկոցուն ևս նշմարին խանձողք, այլ ոչ որպէս զԱրագածուն հզօրք և ընդ երկար եռացեալք. բայց հին և ահեղ զօրութիւն նոցա ծանուցաւ և յաւուրս մեր յամին 1840 (որպէս տեսցի 'ի տեղագրի աշխարհին). 'ի հիւսիսոյ նոցին Բարգող լեառն, և 'ի հարաւոյ հզօրն Դանտուրեկ? որ զսահմանս Պայեզիտոյ ծածկեալ է լաւայիւ և ընդ կողմն Տիատինոյ բլուրս բլուրս կուտակեալ է զեաւ խանձողն. նոյն նշան երևի և 'ի բուն սահմանս Տիատինոյ զաղբերակամբք եփրատականն Արածանւոյ, ուր ասեն և ողջոյն կամուրջ մի ծծմբոյ լինել, այսինքն 'ի քարացմանէ ծծմբախառն հանքային աղբերաց: Արևմտեայ բաղուկ զարուս ոչ է քննեալ, գուցէ ելցեն և 'ի կողմանս Պինկէօլայ հրաբուխք: Ի ջրաժիտս Եփրատայ և Տիգրիսի՝ առ ակամբք սորա՝ Ճանաչին հրաբուխ լերինք և երկիր Արղնի և սահմանք Տիարպէքիրու. և նոյն ինքն քաղաքն մեծ կառուցեալ է 'ի խառնարանի հրաբխի շինելոյ: Սահմանք ծովուն Վանայ միւս ևս մեծ կենդրոն են հրաբղխից, յորոց մի և բարձրն Սիփան Թուի շեղջակուտակ ձեւոն, և 'ի մոկ կուսէ լեառնն Նեբրովթայ (Նեմրուտ) որոյ և վերաշնչութիւն նշանակի 'ի յիշատակագրաց մերոց 400 ամաք յառաջ, և լիճք նորին ամենեցուն ծանօթք են. զհրաբխի կերպարանս յայտ առնեն և Բաղեշոյ սահմանք, և 'ի հիւսիսոյ արևելից՝ կողմանք Բերկրոյ: ՑԱրարատականն՝ որ 'ի կանուխ ժամանակաց ծանուցաւ Հրոյ համբարանոց լինել՝ ծանօթագոյն է բարձրն Սաւալան 'ի հրաբուխս: Ի լերինս Կորդուաց չեւ ևս են ծանուցեալ հրաբուխք, այլ աներկբայ Թուի գոլ և 'ի նոսա, քանզի և գլատանի անդ ծծումբ:

16. Այսքանեաց և Թերևս յոլովից ևս լերանց հրակատար վերածխութիւնք և կողապատառ հոսանք խանձից, որք երբեմն ահեղս և սիրալի տեսարանս գործէին 'ի Հայս, վաղ ուրեմն դադարեալք են 'ի շինչելոց, այլ ոչ խսպառ նուազեալ է ստորերկրեայ եռանդնապոյտ հրոյն զօրութիւն, որ և մերձ ընդ մերձ յայտնի մեծասահման և բուռն սասանութեամբք գետնոյ, մանաւանդ 'ի կողմանս Արարատայ և Երեւանու (որպէս յամսն 341. 862. 894. 1319. 1679. 1681. 1819. 1827. 1840.) Կարնոյ, Սիւնեաց (728. 1659) Արցախոյ (1140), Վանայ և Խլաթայ, (1276. 1441. 1649) և Արարատականի, յորս մեծամեծ կենդրոնքն են հրաբխից. և Երզնկայ՝ որ 'ի կնոյ ԺԱ դարու ցելս ԺԸ-ին իբրև 20 անգամ յիշի մեծապէս շարժեալ և կործանեալ: — Իսկ յարատեւակ և կենդանի նշանակք հրաբուխ զօրութեանցն ջերմուկք՝ ոչ սակաւ գտանին 'ի Հայս, 'ի Խաղտիս և 'ի Կարին (Իլիճա և Սօուգ ջերմուկ), 'ի լերինս Բամբակայ, յԱխալցխա, 'ի Հասանղալա, 'ի Խնուս, յԱլաշտաղ, 'ի Շիրակ առ Ախուրեանիւ, 'ի Ծարյեղից հարաւոյ Սևանայ, և 'ի միջավայր Գարապաղու, և այլ ուրեք ուրեք, որոց ջուրք 'ի հասարակի ծծմբայինք են և երկաթայինք. գոն և կպրահամք 'ի կողմանս Տիատինու, ուր և ցրտաղբերքք, որպէս և 'ի Կարին: — Միւս ևս հրային զօրութեանց արգասիք Ճանաչին քաջ յարևելեան սպառուած բացական սահմանաց Հայոց. 'ի Պաքու Թերակղզւոջ՝ տղմոցայտ լեռնաբլուրք և անբաւութիւն մշտեռանդն աղբերաց նաւթի (191): — Հրաբուխք Հայոց սահմանակցին ըստ հիւսիսի ընդ կովկասայնոցն, ըստ արեւմուտս ընդ Փոքուն Հայոց, ըստ արևելս հարաւոյ Արարատականէ ձգին 'ի Պարսս և անդ յանդգին 'ի մեծ հրաբուխն Տէմավէնտայ. իսկ ըստ հարաւոյ Հայոց չեն ծանուցեալ հրաբուխք:

17. ԲՈՎՔ. — Ի բերս լերանցս և գետնոյ՝ հանդերձ վերոյիշեալ քարամբքդ և աղիւ, գտանին և այլ բաղում աղգք քարանց, մանաւանդ զասալտն սիւնադիզակ, և խանձաքարինք թխագոյնք, կարմրանիշք, գորշք, գեղնափայլք, յորոց շատք յեկեղեցեաց Անւոյ և այլոց տեղեաց շինեալք են. և կիր սպիտակ և խայտ, օձաքար և արդեսեան քար, Վանակն կամ Բիւրեղ քար, և այլն. Հայկաւ, Հայ-քար կապոյտ, պաղեղ և բորակ ուրեք ուրեք: Ի հրահալելեաց երկաթ և պղնձ շատ, այլ և կապար, արծաթ և հեռք ոսկւոյ, զանունկ, մագնիս-երկաթ, զենկ 'ի կողմանս Գանձակայ. ուր ոչ սակաւ բովք են. առատք են և 'ի լերինս Բամբակի 'ի Լէշվար, 'ի Խաղտիս, և 'ի Դ Հայս: Ցիշատակի առ հինսն և ոսկի Այրարատայ, այլ ուրն անյայտ. 'ի կողմանս Ծոփաց միայն երևին արդ հեռք ոսկւոյ. այլ 'ի հասարակի յեանեալ է քննութիւն և վաստակ բովուց 'ի Հայս, և գրեաթէ ամենայն ուրեք վերակացուք բովուցն Ցոյնք են 'ի վաղուց ժամանակաց:

18. ԼԻՃՔ. — Ոչ փոքր սեփական և զուարճագեղ կերպարան ընծայեն Հայաստանեայց և լիճք իւր մեծամեծք բարձրակայք և յոլովք. յորս երեք են

(1) Այսինքն 120 աշտիճան կամ մասն Ջերմութեան ըստ Ջերաչափին Ֆարենայդայ, որ է 39 մասն Ջերաչափին Ռէօմիւրայ: